ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« » 2024 թ. N

Ձեր 20.06.2024

/10.1.3/24449-2024

«ԻՐԱՁԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՀԿ

«ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐԹԱԿ»

FACT INVESTIGATION PLATFORM-Ի ԼՐԱԳՐՈՂ Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

ԷԼ. ՀԱՍՑԵ՝ ALYONA.HAYRAPETYAN.35@GMAIL.COM

Հարգելի՛ տիկին Հայրապետյան,

Ի կատարումն Ձեր 20.06.2024 թ. ՀՀ արդարադատության նախարարությանն ուղղված թիվ /10.1.3/24449-2024 գրության՝ հայտնում ենք, որ 2019 թվականի հուլիսի 1-ից Լեռնային Ղարաբաղում ներդրվել է կուտակային կենսաթոշակային համակարգ՝ Հայաստանի Հանրապետության կուտակային համակարգի համանմանությամբ: Դրա ներքո գործել է մեկ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ, որին ուղղվել են մասնակիցների օգտին կատարվող կուտակային հատկացումները և որը կառավարվում է լիցենզավորված կառավարող ընկերության կողմից:

Լեռնային Ղարաբաղի կուտակային համակարգի ներքո ձևավորված կենսաթոշակային ֆոնդը շարունակում է կառավարվել տվյալ ֆոնդի կանոններին համապատասխան, սակայն առաջացած ֆորս մաժորային իրավիճակում անհրաժեշտություն է առաջացել ձևավորել հստակ իրավական հիմքեր՝ Լեռնային Ղարաբաղի կուտակային համակարգում մասնակցած անձանց կենսաթոշակային

խնայողությունների կատարման ի սկզբանե սահմանված նպատակների սահուն իրագործումն ապահովելու համար:

Հարկ է նկատի ունենալ, որ Լեռնային Ղարաբաղից տեղահանված այն անձինք, ովքեր աշխատում են Հայաստանի Հանրապետությունում և «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված (5-րդ հոդված, 81-րդ հոդվածի 2-րդ մաս) կարգով կատարում են սոցիալական վճարներ, փաստացի հանդիսանում են նաև Հայաստանի Հանրապետության կուտակային համակարգի մասնակից:

Դա նշանակում է, որ այդ անձինք ունեն երկու կենսաթոշակային հաշիվ՝ երկու առանձին համակարգերում:

Կենսաթոշակային խնայողությունների մասնատումը հանգեցնում է լուրջ խնդիրների՝ ինչպես սոցիալական քաղաքականության, այնպես էլ տեխնիկական տեսանկյուններից (երկու զուգահեռ համակարգերի և ինստիտուտների պահպանում, կենսաթոշակի չափի սխալ հաշվարկ, կենսաթոշակի տեսակի սխալ որոշում և այլն):

Ըստ այդմ, առաջացած խնդիրները կարգավորելու նպատակով Ազգային ժողովը 2024 թվականի հունիսի 13-ին 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունել է «Կենսաթոշակային համակարգի կուտակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության լրացուցիչ երաշխիքների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքը:

Օրենքով սահմանվել է Լեռնային Ղարաբաղի կուտակային համակարգում ձևավորված կենսաթոշակային խնայողությունները Հայաստանի Հանրապետությունում գործող կենսաթոշակային ֆոնդեր տեղափոխելու մեխանիզմները:

Նշված օրենքի կիրառմամբ Հայաստանի Հանրապետությունում գործող կենսաթոշակային ֆոնդեր տեղափոխվելուց հետո Լեռնային Ղարաբաղի կուտակային համակարգում ձևավորված կենսաթոշակային խնայողություններին, որպես անձի անվամբ բացված կենսաթոշակային հաշվին առկա միջոցների, առնչվող հարաբերություններն ամբողջությամբ կկարգավորվեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ արծարծված մյուս հարցերի վերաբերյալ պարզաբանում տրամադրելը դուրս է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասության շրջանակից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **Զ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ**

Կատարող՝ Գայանե Մանուկյան

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ 010 52 14 31